

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. UBpay համակարգով արագ դրամական փոխանցումներն իրականացվում են ֆիզիկական անձ հաճախորդների միջև:
2. Փոխանցում նախաձեռնողի կողմից ներկայացվող անհրաժեշտ տվյալներ՝
 - Անձը հաստատող փաստաթուղթ.
 - Ուղարկողի անունը, ազգանունը, հեռախոսահամարը.
 - Շահառուի անունը, ազգանունը, որոնք նշված են շահառուի անձը հաստատող փաստաթղթում.
 - Երկրի անվանումը, ուր պետք է փոխանցվեն դրամական միջոցները.
 - Անկանխիկ ստացման դեպքում՝ Ստացող կողմի անվանումը, Շահառուի բանկային կամ քարտային հաշիվը.
 - Գումարը և արժույթը.
 - Փոխանցման նպատակը:
3. Փոխանցում ստացողի կողմից ներկայացվող անհրաժեշտ տվյալներ՝
 - Անձը հաստատող փաստաթուղթ.
 - Ստացողի անունը, ազգանունը, հեռախոսահամարը.
 - Փոխանցման ունիկալ/հսկիչ կոդը (12-16 նիշ).
 - Փոխանցողի անուն, ազգանունը և/կամ փոխանցված գումարի չափը և արժույթը:
4. Յուրաքանչյուր փոխանցման համար Բանկը հաճախորդին տրամադրում է փոխանցման կատարումը հաստատող անդորրագիր: Չտրամադրված դրամական փոխանցումների վաղեմության ժամկետը կազմում է 180 օր:
5. Դրամական միջոցների փոխանցման/ստացման կատարման առավելագույն ժամկետը մինչև 10 րոպե է, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկի կամ UBPAy համակարգի կողմից իրականացվում է լրացուցիչ ստուգում:
6. UBPAy համակարգով դրամական փոխանցումներն իրականացվում են Բանկի բոլոր մասնաճյուղերում:
7. Փոխանցման վավերապայմանների փոփոխությունը Բանկի կողմից կատարվում է վավերապայմանների փոփոխման դիմումի փոխանցողի անձնագրի տվյալների հիման վրա՝ առանց լրացուցիչ միջնորդավճարի գանձման: Վավերապայմանների փոփոխությունը կատարվում է միայն ստացող կողմի անձնական տվյալներում:
8. Փոխանցման չեղյալացումը կատարվում է չեղյալացման դիմումի և փոխանցողի անձնագրի տվյալների հիման վրա, առանց լրացուցիչ միջնորդավճարի գանձման, չեղյալացման դիմումի նույն բանկային օրվա ընթացքում, փոխանցված գումարի վերադարձմամբ: Այն դեպքում, երբ Հաճախորդը դիմում է Բանկին փոխանցման չեղյալացման համար փոխանցման իրականացումից հետո 24 ժամվա ընթացքում, Բանկը հաճախորդին է վերադարձնում փոխանցման միջնորդավճարը, հակառակ դեպքում միջնորդավճարը չի վերադարձվում Հաճախորդին:

9. Փոխանցման վերադարձ կատարվում է վերադարձի դիմումի և փոխանցողի անձնագրի տվյալների հիման վրա, առանց լրացուցիչ միջնորդավճարի գանձման: Դրամական փոխանցումների վերադարձի դեպքում միջնորդավճարը չի վերադարձվում Հաճախորդին:
10. Վավերապայմանների փոփոխությունը, չեղյալացումը, հետվերադարձը կատարվում են UBPay համակարգի կողմից սահմանված կարգով:
11. Վավերապայմանների փոփոխությունը, չեղյալացումը, հետվերադարձը ենթակա է կատարման միայն չվճարված փոխանցումների դեպքում:
12. Եթե փոխանցված միջոցներն արդեն վճարված են շահառուին, ապա Բանկը պատասխանատվություն չի կրում գումարների վերադարձման համար: Փոխանցված միջոցները շահառուի կողմից չստանալու դեպքում փոխանցված միջոցների հետ վերադարձման համար Բանկը պատասխանատվություն չի կրում:
13. Բանկն իրավունք ունի փոխանցման կատարումը մերժել, եթե վերջինս չի համապատասխանում իր կամ համագործակցող կազմակերպության ներքին իրավական ակտերին կամ միջազգային օրենսդրության պահանջներին, ինչպես նաև պատասխանատվություն չի կրում համագործակցող կազմակերպության կողմից գործարքը մերժելու, կասեցնելու կամ սառեցնելու, գումարի հետվերադարձի, սանկցիաների կիրառման պատճառով գումարը շահառուին տրամադրելու կամ տրամադրման ժամկետների համար:
14. Բանկը պատասխանատվություն չի կրում հաճախորդի կողմից տրված սխալ տվյալներով փոխանցման վնասների համար:
15. Փոխանցումների իրականացման համար, ինչպես նաև հետո Բանկի և/կամ համագործակցող կազմակերպության կողմից կարող են պահանջվել լրացուցիչ տեղեկություններ, փաստաթղթեր, գումարի ծագման կամ փոխանցման հիմնավորման վերաբերյալ:
16. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով Բանկը կարող է հաճախորդից՝ «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ: